ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Ք. Երևան, 27 հունվարի 2022 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում են՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Խոջոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)
Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)
Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)
Է.Բասենցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (Խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝
Գ. Ավետիսյան- ՍԱՏՄ ղեկավար,
Գ. Սարոյան- ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ,
Մ. Երիցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ,

Հ.Սարգսյան - ՍԱՏՄ որակի ապահովման վարչության պետի պարտականությունները կատարող,

Ողջունելով ներկաներին Խորհրդի նախագահ Վ. Քերոբյանը փաստեց, որ քվորումը ապահովված է: Ներկայացրեց օրակարգը և առաջարկեց քվեարկել:

Ա. Ասոյանը հայտնեց, որ ՀՀ դատախազությունից ստացվել է գրություն կենսաբանական ակտիվ հավելումների գրանցման խնդրի վերաբերյալ: Հակիրճ ներկայացրեց խնդիրը, ժամանակի մեջ տեղավորվելու դեպքում առաջարկեց ներառել որպես օրակարգային հարցերի:

Գ. Ավետիսյանն առաջարկեց օրակարգային հարց ներառել նաև կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է սահմանել անասնաբույժի օր և բուսասանիտարի (ագրոնոմ) օր: Միաժամանակ հայտնեց, որ մասնագիտական տոները աշխատանքային օրեր են:

Նախագահը համաձայնեց քննարկել հարցի նպատակահարմարությունը, միաժամանակ առաջարկեց որպես առաջին հարց անդրադառնալ թունավորումների վերաբերյալ նախկինում կայացած քննարկմանը և լսել, թե թվային ինչ թվային գործիքներով է նախատեսվում կանխարգելու իրականացնել: Նախագահը նաև առաջարկեց օրակարգում ներառված ճագարների մորթին վերաբերող հարցի շրջանակներում քննարկել սպանդանոցների մորթի կազմակերպման ընդհանուր գործընթացը, թե օրենսդրական, թե կիրառության տեսանկյունից:

Ամփոփելով օրակարգի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները՝ Նախագահը հայտնեց, որ օրակարգը լրացվում է հետևյալ 3 հարցով՝ թունավորումների վերաբերյալ նախկինում կայացած քննարկման արդյունքների ներկայացում, կենսաբանական հավելումների գրանցման վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից ներկայացված խնդիր, մասնագիտական տոների սահմանում:

Նախագահը ներկայացրեց նոր օրակարգը՝ ըստ հարցերի հերթականությամբ և առաջարկեց քվեարկել.

Օրակարգային առաջին հարցի զեկուցման նպատակով ձայն տրվեց Գ. Ավետիսյանին:

Գ. Ավետիսյանը շնորհանդեսի տեսքով հանգամանալից ներկայացրեց Տեսչական մարմնի 2021 թվականի հաշվետվությունը՝ ներկայացնելով կատարված աշխատանքներն ըստ ոլորտային ուղղությունների:

Շնորհակալություն հայտնելով Գ. Ավետիսյանին՝ Մ. Բեգլարյանը հնչեցրեց մի քանի դիտարկում և առաջարկություն: Նա առաջարկեց որոշ տեղեկություններ ներառել հաշվետվության մեջ և հաշվի առնել ստուգումներ կատարելիս: Մասնավորապես, միջազգային համագործակցության մասին, FAO-ի (ՊԳԿ) հետ համագործակցության և կազմակերպված դասընթացների մասին ընդգծեց, որ այն շատ մեծ ծրագիր է և շատ գործնական: Կցանկանար նշված 2 դասընթացներին ավելացնել նաև մանրէաբանական ռիսկերի գնահատման դասընթացները, որոնք փետրվար ամսվանից սկսած իրականացրել են, բովանդակային առումով շատ կարևոր են եղել գնահատման, կառավարման, նաև համապատասխան ռիսկերի կառավարման մեթոդաբանության, խորհրդատվության տեսանկյունից: Վերջերս իրականացվել են նաև տնտեսվարողների գրանցման, նաև փաստաթղթերի կարևորության մասին եռօրյա դասընթաց, որտեղ հնարավորինս գործնական մոտեցում էր ցուցաբերված, քանի որ հաշվետվության մեջ ներառված խնդիրներից կար տնտեսվարողների գրանցումը, որովհետև տնտեսվարողները հաճախ խուսափում են գրանցումից, և հաճախ ստուգումների ժամանակ ունենում ենք խնդիր չբացահայտված տնտեսվարողների հետ կապված, և ինքը շատ կարևորում է տնտեսվարողների գրանցման հարցի բարելավման կարևորությունը, և դասընթացների ընթացքում միջազգային փորձագետը տվել է այն բոլոր

տեղեկությունները, նյութերը, որոնք ցանկալի է, որ հիմք դառնան տնտեսվարողների գրանցման համակարգի բարելավման ժամանակ: Գրանցման աշխատանքը կատարելիս հայտնի է դարձել, որ յուրաքանչյուրը կարող է տվյալներ մուտքագրելով դառնալ օպերատոր: ՊԵԿ-ում էլ ՀՎՀՀ-ի ներբեռնմամբ է գրանցում իրանակացվում, գուցե այդտեղից օգտվելով հնարավոր լինի կանխարգելել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետությունում մոնիթորինգային հետազոտություն է իրականացվել՝ գործնական առաջարկ ներկայացրեց՝ ի դեմս ռիսկերի գնահատման կենտրոնի. խնդրեց Գ. Ավետիսյանին, որպեսզի պաշտոնապես, եթե այդ տեղեկությունները հրապարակման համար բաց են, տվյալները ուղարկեն, և կենտրոնը պատրաստ է իրականացնել ռիսկերի գնահատում, չնայած որ դեռևս ռիսկերի կառավարող և գնահատող փոխհարաբերություններն օրենսդրական մակարդակով հաստատված չեն, կենտրոնը կարող է նախաձեռնությամբ հանդես գալ և կատարել ռիսկի գնահատում այն մթերքների համար, որոնք ներառված են մոնիթորինգային պլանում:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ համաձայն է և կարևորելով ռիսկերի գնահատումը՝ տեղեկացրեց, որ ռիսկի գնահատման կենտրոնի նշանակման խնդիրը շարունակում է չլուծված մնալ: Տեսչական մարմինն ունի սպառման տվյալների բազա, որը հնարավորություն է տալիս ունեցած տվյալները համեմատել սպառման տվյալների հետ: Առաջարկն անպայման կքննարկվի, քանի որ հարցը կարևոր է նաև տեսչական մարմնի համար:

Մ. Բեգլարյանի կողմից ռիսկի գնահատման վերաբերյալ ներկայացված դիտարկումներին ի պատասխան Գ.Ավետիսյանը հայտնեց, որ Տեսչական մարմինը պատրաստակամ է բոլոր հարցերը քննարկել ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի հետ:

Մ. Բեգլարյանն անդրադարձավ որպես իրականացված աշխատանք՝ հաշվետվության մեջ նշված անասնահամաճարակային իրավիճակի գոտիավորմանը և խնդրեց պարզաբանել՝ արդյոք այն իրականացնել է:

Մանրամասն ներկայացնելով գոտիավորում գործընթացի բարդությունը՝ Գ. Ավետիսյանը հայտնեց, որ այն դեռ չի կատարվել:

Մ.Բեգլարյանը նկատեց, որ նախկին նիստերից մեկում ներկայացվել էր բավականին մեծ թվով ստուգաթերթերի նախագծեր և փորձեց ճշտել, արդյոք հաստատված ստուգաթերթերի մեջ փոփոխություն է արվում, թե նոր է հաստատվում:

Գ.Ավետիսյանը պարզաբանեց, որ մշակվել են ոլորտային նոր ստուգաթերթեր՝ ԵԱՏՄ տեղնիական կանոնակարգերի պահանջների ներառմամբ: Ներկայումս նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն:

Ռիսկերի գնահատման կենտրոնի նշանակման մասին նախագահը հետաքրքրվեց, թե որտեղ է հարցը մնացել առկախված:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ կառավարության համապատասխան որոշման նախագիծը պետք է շրջանառվի, հավանաբար Էկոնոմիկայի նախարարության կողմից: Առաջարկեց նաև մշակված նախագիը նախապես քննարկել նախարարի մոտ, այնուհետև շրջանառել:

Ա. Խոջոյանը նույնպես կարևորեց հարցը և հայտնեց, որ նպատակահարմար է նախագիծը մշակել Տեսչական մարմնի հետ համատեղ:

Ա. Ասոյանը պարզաբանեց, որ հնչեցված հարցը ոչ թե գաղափար է, այլ օրենքով ամրագրված կարգավորում, խնդիրը վերաբերում է նրան, որ օրենքի մեջ նշված է, որ կառավարությունը նշանակում է ռիսկերի գնահատում իրականացնող մարմին (կազմակերպություն), և դրանից պետք է բխի կառավարության համապատասխան որոշումը: Որոշման նախագիծը մշակվել է և տարբեր

ժամանակահատվածներում շրջանառվել է: Որոշման մեջ պետք է նշվեն նշանակման չափորոշիչներ, այսինքն՝ ով ում կարող է նշանակել, ինչ տեխնիկական մասնագիտական հագեցվածություն պետք է ունենա այդ կազմակերպությունը, դրանց ընտրությունը ինչպես է կատարվելու, որ նշանակվելու է և նման այլ մանրամասն հարցեր: Ներկայումս խնդիրն այն է, որ իրենք պատկերացնում էին՝ դա կարող է արվել նաև տենդեռի միջոցով, և դիմող մի քանի կազմակերպություններից կարող է կառավարությունն ընտրություն կատարել, նշանակելով համապատասխան կազմակերպությունը: Խնդիրը փաստացի մնում է կառավարության որոշման նախագծի հաստատման դաշտում, որի մեջ պետք է նշված լիներ բոլոր չափորոշիչները: Նախորդ քննարկումների արդյունքներով կա մեկ տեսակետ, որ ՀՀ-ում այդ գործունեությունը կարող է իրականացնել ընդհամենը մեկ կազմակերպություն, նաև օրենքը սահմանում է, որ այդ չափորոշիչները կարելի է հաշվի չառնել և նշանակել այդ մեկ կազմակերպությանը, քանի որ օրենքում գրված է, որ կառավարությունը նշանակում է: Հայտնեց, որ իր կարծիքով, դա խնդրահարույց է և որևէ մեկը չի կարող բացառել, որ վաղը ՀՀ-ում կարող են հայտնվել մի շարք այլ կազմակերպություններ, որոնք կարող են իրականացնել այդ մոնիթորինգը և գնահատումը: Ուստի կարծում է, որ եթե հանձնարարական է ձևակերպվում, պետք է կենտրոնանալ կառավարության որոշման մշակման վրա, համապատասխան չափորոշիչները սահմանել, և բոլոր այն կազմակերպորթյունները, որոնք կհամապատասխանեն այդ չափորոշիչներին, հնարավորություն ունենան դիմել, իսկ կառավարությունը ըստ այդմ կնշանակի:

Նախագահը հայտնեց, որ հանձնարարվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի մասնագետների ներգրավմամբ մշակել և շրջանառել նշանակման մասին, ինչպես նաև չափորոշիչներ սահմանելու մասին կառավարության որոշման նախագիծ:

Տեսչական մարմնի 2021 թվականի հաշվետվության վերաբերյալ Ա. Ասոյանն առաջարկեց հաշվի առնել մի քանի դիտարկում՝ <<Տեսչական մարմինների մասին>> օրենքի 15-րդ հոդվածի համաձայն հաշվետվությանը ներկայացված են որոշակի պահանջներ, որոնք պետք է պարտադիր արտացոլված լինեն հաշվետվության մեջ, ընդհանուր առմամբ, նախորդ տարիների հաշվետվությունների համեմատ, ներկայացված հաշվետվության բովանդակությունը և կազմելու ձևը լուրջ առաջընթաց է գրանցել, սակայն մի քանի կետեր անհրաժեշտ է ավելացնել: Դրանք նաև աշխատանքային կարգով կտրամադրվեն:

1) Պետք է ներկայացնել ռիսկերի իրավիճակի հստակ վերլուծություն, այսինքն՝ ինչ է հնարավոր եղել կանխել կանխարգելիչ գործողությունների արդյունքում:

2) Հաճախ կատարվող խախտումները կամ շեղումները, որոնք վերհանել է տեսչական մարմինը: Նորից անհրաժեշտ է առանձին կետով հստակ նշել, թե ընդհանուր վերահսկողական աշխատանքների արդյունքում ինչ հաճախակի կրկնվող խախտումներ են արձանագրվել:

3) Վարչական ակտերի դեմ բերված բողոքների վերաբերյալ ընդունված որոշումները ներկայացված են միայն սննդամթերքի անվտանգության ոլորտի համար, բայց ներկայացված չեն անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտները, նաև բացակայում է դատական կարգով բողոքարկման արդյունքների վերաբերյալ տվյալներ: Դա ևս պետք է ներառել, որովհետև օրենքի պահանջ է:

5) Նույնպես օրենքից բխող պահանջ՝ տարեկան հաշվետվության փաստացի տվյալները պետք է համեմատվեն նախորդ 2 տարիների՝ նույն իրավիճակներն արտացոլող տվյալների հետ: Այսինքն՝ 2021 թվականի տվյալները պետք է համապատասխանաբար ներկայացնեն նաև նախորդ 2 տարիների թվային տվյալները, որպեսզի երևա, թե որտեղ ինչ առաջընթաց է գրանցվել:

Նախագահը հաշվետվության մասին կարծիք հայտնեց, որ համաձայն չէ ներկայացման ձևի հետ, շատ ավելի կենտրոնանում ենք կատարված աշխատանքի, ոչ թե ստացված արդյունքի վրա, հիմնական շեշտադրումը ոչ թե արդյունքի վրա է, այլ կատարած աշխատանքի: Օրինակ՝ 285 մարդ է թունավորվել, մի քանի էջով ներկայացված են կատարված գործողությունները, սակայն պետք է, որ շնորհանդեսը լինեն բովանդակային, ոչ թե ձևական: Պետք է հասկանալ, թե ինչպիսին է սննդամթերքի անվտանգության վիճակը երկրում: Թունավորումների դեպքերի մասով բացակայում է նախորդ տարիների հետ համեմատականը: Բացակայում է նաև թունաքիմիկատների մասով համեմատականը:

Նախագաը ներկայացրեց, որ շնորհանդեսում նշված է, որ կատարվել են փորձարկումներ, սակայն արդյունքն արտացոլված չէ հաշվետվության մեջ: Սպանդանոցների վերաբերյալ կարևոր է իրականացվող մորթի ծավալ հասկանանալը: Օրինակ, 92 սպանդանոց կա, դրանց որոշ մասը աշխատում է, բայց այդ աշխատելը հարաբերական է (շաբաթը 1 գլուխ կենդանի է մորթվում, թե օրը 20 գլուխ), որպեսզի հասկանալի լինի՝ այդ ոլորտը կայանում է, թե ոչ: Նախագահը շեշտեց, որ խորհրդի համար կարևոր է բովանդակային հատվածը:

Հաշվետվության մեջ ասվում է, որ դիմում-բողոքները գտնվում են ամփոփման փուլում: Օրենքով սահմանված պահանջ է՝ տարեկան հաշվետվությունները ներկայացվում են մինչև փետրվարի 1-ը, նշանակում է, որ արդյունքները պետք է ամփոփված լինեն, ոչ թե գտնվեն ամփոփման փուլում:

Նախագահը ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ պեստիցիդների խանութներում և առհասարակ այդ ոլորտում տիրում է անմխիթար վիճակ: Չնայած այն հանգամանքին, որ անցյալ տարվա ընթացքում խնդիրը քննարկվել է, սակայն առաջընթացի վերաբերյալ պետք է պարզաբանումներ տրվեն:

Նախագահը ներկայացրեց, որ արտահանողները բողոքում են, որ մեր երկրում խիստ պայմաններ են սահմանված արտահանման ժամանակ՝ օրինակ՝ փաստաթղթերին, ինչպես նաև կենդանի կենդանիների կարանտինացման գործընթացին ներկայացվող պահանջները: Արդյունքում արտահանողները մրցակցային միջավայրը կորցնում են, օրինակ վրացիների նկատմամբ: Հարց է կարևոր է և արժե առանձին բարձրացնել, ինչն է նպատակը, և ինչու չենք կարող արտահանման մասով լինել մաքսիմալ լիբերալ:

Նախագահը խնդրեց խոսել նաև հաշվետվության նախավերջին սլայդի 940000 փորձարկման վերաբերյալ տվյալի մասին: Նաև առաջարկեց հաշվետվության մեջ նշել Խորհրդի նիստերի վերաբերյալ, քանի որոշում է կայացվել, որքանն է ընթացքի մեջ: Խորհրդի որոշումների կատարման վերաբերյալ նույնպես Խորհրդին հաշվետվություն է նախատեսվում ներկայացնել, կարելի է ներառել տարեկան հաշվետվության մեջ:

Հնչեցված բոլոր հարցերին Գ. Ավետիսյանը տվեց հանգամանալից պատասխաններ: Մասնավորապես.

Հայտնեց, որ գլոբալ իմաստով այնքան էլ համաձայն չէ, և այնքանով կհամաձայներ, եթե դա վերաբերվեր նախարարությանը, քանի որ դրանք բովանդակային մասով նախարարության գործառույթներն են քաղաքականության մշակման տեսանկյունից, իսկ տեսչական մարմնի գործը մշակած իրավական ակտերի շրջանակներում գործողություններ իրականացնելն ու թվեր ներկայացնելն է: Այլ լիազոր մարմիններ կարող են դրանք վերլուծել և ասել՝ ինչ փոփոխություններ պետք է անել:

Ինչ վերաբերում է բուսասանիտարիայի ոլորտին, այդ խնդիրները կան, բայց դրանք ոչ թե վերաբերում են պեստիցիդների որակին, այլ հիմնականում

մակնշումներին: Գրեթե բոլոր խախտումները վերաբերում են մակնշումներին, նաև սխալ պահպանմանը, սխալ օգտագործմանը:

Կենդանիների արտահանումների մասին նա հայտնեց, որ կարանտինը տեսչական մարմինը չի որոշում, և ոչ էլ Վրաստանն է որոշում: Կարանտինը սահմանում է այն երկիրը, որն ընդունում է: Կարանտինից բողոքողները ուզում են, որ տեսչական մարմինը կոռուպցիայով զբաղվի կամ օրենք խախտի, գրի, որ 21 օր կարանտին ենք պահել, բայց չպահի: Տեսչական մարմինը բոլոր արտահանողներին զգուշացրել է, որ եթե ուզում են կարանտին չպահենլ, թող բերեն տվյալ երկրի լիազոր մարմնի թույլտվությունը կարանտին չպահելու կամ պակաս պահելու մասին: Այդպիսի օրինակ եղել է, երբ բերվել է գրություն, որ կարանտին կարելի է պահել 3 օր, այդպես էլ արվել է:

Խորհրդի որոշումների կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացման վերաբերյալ հայտնեց՝ եթե կա նման պահանջ, ինքը համաձայն է:

Ա. Ասոյանը հայտնեց, որ առարկություն չունի, մանավանդ, որ լուրջ առաջընթաց կա, լավ կլինի կամ սկզբում, կամ վերջում նշել, թե քանի նիստ է անցկացվել, քանի որոշում է կայացվել և այլն:

Գ. Ավետիսյանը լաբորատոր հետազոտությունների մասով մանրամասն ներկայացրեց դրանց կատարման պատճառներն ու հիմքերը:

Հաշվետվության մեջ <<Ամփոփման փուլում են>> ձևակերպման վերաբերյալ Գ. Ավետիսյանը նշեց, որ հաշվետվությունը կազմվել է դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տվյալների հիման վրա: Եթե հնարավոր է հունվարը ամսվա ընթացքում ձեռք բերված տվյալները ևս ներառել՝ չկրկնելով 2022 թվականի հաշվետվության մեջ:

Նախագահը փաստեց, որ անհրաժեշտ է ներկայացնել պատկերը դեկտեմբերի 31-ի դրությամբ, դա պետք է արդեն ամփոփված լինի:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ տեսչական մարմնի կողմից ստուգումներ են իրականացվում նաև դեկտեմբերի 30-ին: Նա համաձայնեց նախագահի դիտարկմանը, այն մասին, որ միևնույնն է, արդյունքները ներկայացվում են մինչև փետրվարի 1-ը, և կարելի է մինչև հունվարի վերջ դեկտեմբերի նմուշառումները կամ ստուգումները, բոլոր աշխատանքները ամփոփված ներառել հաշվետվության մեջ:

Ա. Ասոյանը շեշտեց, որ անհրաժեշտ է ներկայավնել 2021 թվականի տվյալները: Հունվար ամսվա արդյունքները ամփոփված ներառվելու են հաջորդ տարվա հաշվետվության մեջ:

Նախագահն առաջարկեց անդրադառնալ երկու հիմնական հարցերի՝ նախորդ տարվա ընթացքում արձանագրված թունավորումների և պեստիցիդների խանութների վիճակին, իսկ սպանդանոցների մասով կլինի առանձին քննարկում: Շեշտեց, որ թունավորումների հարցում թվային գործիքներ կիրառելով կարելի է լուրջ կանխարգելում իրականացնել: Որպես օրինակ ներկայացրեց թվայնացման ենթակա հետևյալ տեղեկատվությունը՝ սանիտարական գրքույկների, առողջապահական հաստատությունների և ՊԵԿ-ի, ախտահանման պայմանագրերի տվյալները: Նախորդ անգամ, որբ քննարկվել են թունավորման դեպքերը, պարզ է դարձել, որ իրականում բոլոր թունավորման դեպքերը բխում են մի քանի պատճառից, որոնց մասին հնարավոր էր իմանալ նախապես: Պայմանավորվել են ինչ գործողություններ անել: Նա խնդրեց ներկայացնել այդ հարցում ինչ է արվել և ինչ առաջընթաց կա:

Գ. Ավետիսյանը մեկնաբանեց, որ տեսչական մարմինն ունի ներդրված էլեկտրոնային համակարգ, շուրջ 3 տարվա ջանքերից հետո այս տարի ֆինանսավորումը եղել է, հնարավոր է ինչ-որ ձևով գործարկել այն:

Մանրամասն ներկայացվեց և քննարկվեց նախարդ տարվա ընթացքում արձանագրված թունավորման դեպքերի պատճառները և դրանց կանխարգելմանն ուղղված գործողությունները:

Նախագահը մեկ անգամ ևս շեշտեց, որ տվյալների թվայնացումը կարևոր և մեծ դեր ունի կանխարգելման գործընթացում, ինչպես նաև ուղղված է ռիսկերի նվազեցմանը:

Լ. Նանուշյանը նա հարցադրում արեց, թե առհասարակ հանրային սննդի պատրաստման կանոնների իրազեկումը որ մարմնի իրավասությունն է, որ մարմինն է պատասխանատու հանրային սննդի կազմակերպման իրազեկման հարցերի համար:

Լ. Նանուշյանը խնդրեց Խորհրդին ներկայացնել 2021 թվականի ընթացքում արձանագրված թունավորումների դեպքերի վերաբերյալ եզրակացությունները:

Ա. Ասոյանը փաստեց, որ այո, կա այդ մարմինը, դա մեկ մարմին չէ, դա և Առողջապահության նախարարությունն է, և տեսչական մարմինը, և տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակը՝ օրենքով:

Լ. Նանուշյանն ընդգծեց, որ դա առողջապահության նախարարության գործառույթ չէ, իրենք երբեք հանրային սննդի հարցերով չեն զբաղվում, թունավորումների արդյունքում մարդկանց առողջական խնդիրներով են զբաղվում:

Ա. Ասոյանը նշեց, որ եթե խոսքը վերաբերվում է մարդու առողջությանը, ցանկացած գերատեսչություն, որ զբաղվում է դրանով, իր ֆունկցիան պիտի կատարի:

Լ. Նանուշյանը կարծիք հայտնեց, որ այդ դեպքում ոչ թե պետք է տնտեսվարողներին ասել՝ գնա, գտիր մեկին, ով քեզ կբացատրի, այլ իրազեկումն իրականացնել պատասխանատու մարմինների միջոցով: Նա առաջարկեց ակտիվացնել իրազեկման աշխատանքները:

Ա.Ասոյանը հայտնեց, որ բոլոր ուղղություններով իրազեկումը ընթանում է:

Քննարկվեց նաև պեստիցիդների խանութներում առկա խնդիրները:

Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ ամենամեծ խնդիրն այն է, որ չկան մարզերում կառույցներ, որոնք գյուղացուն խորհրդատվություն են մատուցում, մարդիկ պեստիցիդ են գնում, որովհետև հարևանը դա օգտագործել է կամ խանութի աշխատակիցը ոչ ճիշտ խորհուրդներ է տալիս: ՀՀ տարածք օրինական ճանապարհով մտնող բոլոր պեստիցիդները համապատասխանում են իրենց մակնշմանը:

Նախագահի հարցին, թե ինչ գործողություններ են կատարվում խանութներում մակնշմանը չհամապատասխանող պեստիցիդ հայտնաբերելու դեպքում, Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ սխալ մակնշումը վերաբերվում է ոչ թե պեստիցիդի ազդող նյութի տոկոսին, այլ մակնշման այլ խախտումներին, օրինակ, եթե նշված է 1,5% ազդող նյութ, դա իրականում կա, հետագայում խախտումներ են լինում ռուսերենից կամ անգլերենից հայերեն սխալ թարգմանության ժամանակ:

Քննարկված 2 հարցերի վերաբերյալ Ա. Խոջոյանն առանձնացրեց մի քանի դիտարկում՝

1. Արտադրական տարածքներում ՎՎՀԿԿ համակարգի սերտիֆիկացման մասին նա նշեց, որ օրենքը 2020 թվականից արդեն կիրառվում է, ուժի մեջ է, և արդեն պետք է ներդրված լինի: Մի բան մենք պետք է որոշել՝ կամ մենք պետք է նոր կառավարության որոշումով հանդես գանք և ժամկետը երկարացնենք, կամ էլ տեսչական մարմինը պետք է սկսի վերահսկողություն, պետք է հասկանալ, թե ինչ ծավալի արտադրական պրոցեսներում է բացակայում,

2. Պեստիցիդների պարագայում, անկախ մակնշմանը, ինքը համաձայն եմ Գ Ավետիսյանի հետայն հարցում, որ ներկրման ժամանակ մակնշումը համապատասխանում է ապրանքատեսակին, բայց վաճառքի կետերում բաց պարկերով է վաճառվում, տարբեր տարայավորմամբ, այդ ժամանակ խնդիրներ են առաջանում: Գուցե անհրաժեշտություն կա այն դարձնել լիցենզավորված

գործունեություն, վաճառք իրականացնողները, ինչպես Գ. Ավետիսյանն ասաց խորհրդատվություն իրականացնելու մասին, լինեն լիցենզավորված մասնագետներ, տեղում խորհրդատվություն կիրականացնեն և պատշաճ փաթեթավորմամբ վաճառեն,

Գ. Ավետիսյանն ասաց, որ այդ դեպքում պետք է թույլ չտալ, որ պարկերով պեստիցիդներ բերվեն ՀՀ, ոչ մի արտադրող 100 կամ 50 դրամանոց փաթեթավորում չի անելու: Մանավանդ, որ այդ փոքր փաթեթավորմամբ պեստիցիդները նույնպես պիտի մակնշվեն:

Նախագահը հետաքրքրվեց, եթե օրենքն ընդունվել է և կա պահանջ, ինչու ՎՎՀԿԿ համակարգի չի ներդրվում:

Գ. Ավետիսյանն ասաց, որ ստուգաթերթերը ներկայացվել են դեռևս 2018 թվականին, տարբեր պատճառաբանություններով չեն դրանք ընդունվել, այնուհետև անհրաժեշտ է եղել մշակել ստուգաթերթեր, որոնք կներառեն ԵԱՏՄ ոլորտային նորմատիվ իրավական ակտերի պահանջները: Նոր մշակված և ներկայումս շրջանառվող փաթեթում ՎՎՀԿԿ համակարգի վերաբերվող պահանջներ առկա են:

Վերադառնալով թվային գործիքներին՝ նախագահը հավելեց, որ շարունակ ստուգելու, տուգանելու դեպքում կբարձրանա համընդհանուր աղմուկ: Առաջարկեց սննդի արտադրությամբ զբաղվող բոլոր ընկերություններին ուղարկենք նամակ՝ իրազեկելով, որ օրենքը ուժի մեջ է մտել, խնդրում ենք մեզ տրամադրել ՎՎՀԿԿ համակարգի առկայության վերաբերյալ տեղեկատվություն կամ նշել ձեր պլանները, թե երբ այդ ամեն ինչը կանեք:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ ոլորտում գործունեություն իրականացնող արտադրողների հետ դեռևս 2018 թվականին դա քննարկվել է, որ այդ համակարգի ներդումը դառնալու է պարտադիր պայման:

Նախագահը շեշտեց, որ Տեսչական մարմնի հանրային իրազեկման համար պատասխանատու ստորաբաժանումը պետք է PR կազմակերպի, որի արդյունքները պետք է չափվի մարդկանց իրազեկվածությամբ, որպեսզի հայտնի դառնա, թե քանի մարդ կամ արտադրողների քանի տոկոսն է տեղյակ այդ գործընթացից:

Ա. Առաքելյանը խոսելով թունավորումների հարցի մասին՝ նշեց, որ էլեկտրոնային ստուգումները կհեշտացնեն Տեսչական մարմնի գործը, բայց մյուս կողմից՝ եթե իսկապես մեխանիզմ ներդրվի, որ այդ մարդիկ, ովքեր աշխատում են խոհանոցներում, անցնեն դասընթացներ սանիտարահիգիենիկ ներմերի պահպանման մասին, տնտեսվարողները այդ մասին տեղեկատվություն ներկայացնեն Տեսչական մարմին, հարցը կլուծվի: Նա փորձեց ճշտել՝ կա արդյոք օրենսդրական կարգավորում դրա վերաբերյալ թե ոչ: Հնարավոր է արդյոք նախաձեռնությամբ հանդես գալ, որ օրենքի պահանջ դրվի:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց օրենքով նման պահանջ սահմանված չէ, որ դա վտանգավոր է, բայց կարելի է փորձել: Բայց պետք է հասկանալ, որ փաստաթղթավորումը կամ լիցենզավորումը և մատուցողին, և խոհարարին, և մաքրուհուն է վերաբերվում:

Ա. Ասոյանն առաջարկեց խորհրդատվության հարցերը կազմակերպել կարճ, ուսուցանող հոլովակների տարբերակով:

Գեորգի Ավետիսյանը հայտնեց, որ մեկ շաբաթվա ընթացքում կներկայացնի ՎՎՀԿԿ համակարգի վերաբերյալ PR պլան,

Խորհրդի կողմից առաջարկվեց բոլոր հանձնարարականների համար ամրագրել ժամկետներ:

Նախագահը նշեց, որ ՎՎՀԿԿ համակարգի ՎՎՀԿԿ համակարգի վերաբերյալ PR պլանը ներկայացնել մինչև 2022 թվականի փետրվրի 4-ը: Պլանը պետք է ներառի

գործողություններ, բյուջե, որի արդյունքում տնտեսավարողների 90 տոկոսը տեղյակ կլինի ՎՎՀԿԿ համակարգի ներդրման պահանջի մասին: Տեսչական մարմնի գործառույթների PR պլանի կազման համար առաջարկեց ներկայացնել առաջարկություններ, որոնք կքննարկվեն:

Մ. Բեգլարյանը հավելեց, որ տարբեր կարծիքներ հնչեցին ՎՎՀԿԿ համակարգի և հանրային սննդի կետերի կարգավորման տեսանկյունից, մասնավորապես՝ ՎՎՀԿԿ համակարգի ժամկետը երկարացնելու մասին, իր սուբյեկտիվ կարծիքն այն է, որ մեր երկրում անլուրջ վերաբերվելու հետևանքով տարիներ շարունակ կառավարության որոշման պահանջի կատարման ժամանակահատվածը պարբերաբար երկարացվել է, և եկել է մի պահ, որ տնտեսվարողները պետք է ներդրած լինեն այդ համակարգը: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով ամրագրված է ավելի թույլ պահանջ, որ ոչ թե ՎՎՀԿԿ համակարգ ներդրվի, այլ այդ համակարգի պահանջներն ապահովվեն, այսինքն, պետք է գիտակցությունը բարձրացնելով տնտեսվարողներին ստիպել, տնտեսվարողներին փոխանցել անհրաժեշտ տեղեկատվություն, ոչ թե ՎՎՀԿԿ համակարգով վախեցնել, այլ բացատրել, որ ցանկացած համակարգ տարրական կանոնները, սկզբունքները պահպանելու հիման վրա է: Նա առաջարկեց այդ ստուգումները կատարել էլեկտրոնային տարբերակով, խոսեց նաև տնտեսվարողների գրանցման համակարգի վերաբերյալ, որում անհրաժեշտ է ներառել այն տեղեկությունները, որոնք կան ստուգաթերթերում: Դասընթացի վերաբերյալ հիշեցրեց, որ գործնական առաջարկներ են եղել մասնագետի կողմից, որոնք մի քանի քայլով առաջ կտանեն ստուգման գործընթացը՝ կրճատելով նաև տեսուչների ծանրաբեռնվածությունը:

Նախագահի դիտարկմամբ, թվային տեղեկատվության հավաքագրումը մեծ քանակի հարց է լուծում, մանավանդ, երբ տնտեսավարողներն իմանում են, որ դա կիրառվում է, հարցին այլ կերպ են մոտենում: Նա առաջարկեց երկու շաբաթվա ընթացքում ներկայացնել պլան՝ սահմանելով թվայնացման առաջնահերթություններ:

Ա. Ասոյանը առաջարկեց օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերը նույնպես դնել էլեկտրոնային քվեարկության, քանի որ ժամկետների հարց կա:

Նախագահը նշեց, որ այսուհետ նիստերի օրակարգում, որպես առաջին հարց ներառել նախորդ նիստում տրված հանձնարարականների և որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը:

Խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝ հեռակա քվեարկության ներկայացնել Տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվության նախագծի լրամշակված տարբերակը, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքները և ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020-2021 թվականների 3-4-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների համեմատական վերուծությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ